## ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ
## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ

*ԵՐԵՎԱՆ*

*ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՆՏՐԵԼՈՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ ՀԱՆՁԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆԻ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ:*

*ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԻՐ ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՅՆ ԴՅՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ԸՆՁԵՌՎԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԵՎ ՄԱՆԱՎԱՆԴ ԱՅՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ, ՈՐԸ ՑՈՒՑԱԲԵՐՎԱԾ Է ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ: ԱՅԴՊԻՍԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ, ԱՆՍԱՀՄԱՆ ՍԻՐՈՎ ՈՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ Է ԼՑՆՈՒՄ ԱՄԵՆ ՄԻ ՀԱՅԻ ՍԻՐՏԸ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱԶԱՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ:*

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

Էջմիածին, Հայկական ՍՍՌ
7 նոյեմբերի 1955 թ.